Հաստատում եմ

Տնօրեն՝ ________ «31» 08 2023թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

# ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

# ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Լոռու մարզի ք.Վանաձորի

Հ.Թումանյանի անվան 3 հիմն.դպրոց

5-րդ դասարան

Անուշ Կարապետյան

« 2023-2024 » ուսումնական տարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

***1.*** Ներածություն **(**դասարանի ընդհանուր բնութագիրը***)***

5-րդ դասարանը բաղկացած է 33  աշակերտից, որոնցից 20  -ը տղա են,  13 -ը՝ աղջիկ: Դասարանը ակտիվ է, աշխույժ, սովորողները համերաշխ են, մասնակցում են դպրոցական բոլոր միջոցառումներին:Երեխաները շնորհալի են,երգում են,պարում,նկարում,զբաղվում սպորտով:Դասարանում տիրում է առողջ մթնոլորտ, աշակերտները պարտաճանաչ են, անհարգի չեն բացակայում, սիրում են սովորել:

***2.*** Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները ***`2023-2024*** ուսումնական տարում սովորողներին զինել բնության և հասարակության մասին այն անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով և հմտություններով, որոնք մարդկությունը կուտակել է դարերի ընթացքում:Իրականացնել անձի համալիր դաստիարակություն, որի արդյունավետության համար կարևոր է մտավոր, բարոյական, ֆիզիկական, գեղագիտական, աշխատանքային, իրավական, տնտեսագիտական, քաղաքացիական, էկոլոգիական դաստիարակության միասնությունը: Հայ երեխային դաստիարակել ազգային ոգով՝ ոչ միայն կրթությունը մայրենի լեզվով իրագործելով, այլ համամարդկային արժեքներին զուգընթաց ազգային պատմության, մշակույթի,

ավանդույթների ու սովորույթների յուրացմամբ, ազգային ոգու, մտածելակերպի, հոգեբանության, վարքուբարքի արմատավորմամբ:

***3.*** Հայեցի դաստիարակություն

***3.1 .***Հոգևոր դաստիարակությունը նպատակ ունի բարոյական արժեքներ սերմանելու, սովորողներին հույս, ուժ, բարություն, ձգտում, կյանքի իմաստավորում և արժևորում փոխանցելու: Այն դպրոցական տարիներին շատ կարևոր է արժեքային համակարգի ձևավորման , ինչպես նաև մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: Երեխայի քրիստոնյա մեծանալու համար ամհրաժեշտ է հաշվի առնել նրա մտածողությունը, երևակայությունը, բարոյական ընկալումների զարգացման առանձնահատկությունները:

***3.2 .*** Գեղագիտական դաստիարակությունը սերն ու հարգանքն է գեղեցիկի նկատմամբ: Այն գեղեցիկն ընկալելու, զգալու արվեստն է: Գեղագիտական դաստիարակության միջոցով սովորողները կարողանում են արժեքները գնահատել ըստ արժանվույն, զատել կեղծն իրականից: Այն տալիս է մարդու դիմելառճի շնորհ և կարողություն, վայելուչ և կանոնավոր վարքագիծ:

***3.3*** **.**Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն : Այսօր , կանգնած լինելով մի շարք սպառնալիքների առջև , մեր ազգի համար օրախնդիր է ռազմա-հայրենասիրական դաստիարակությունը, այն ուղղված է հասարակություն- բանակ, դպրոց- բանակ կապերն ամրապնդելուն, հայրենիքն ամեն ինչից վեր դասելուն, այն պահելուն, պահպանելուն, ապագա սերունդներին փոխանցելուն:

***3.4*** **.**Ֆիզիկական դաստիարակություն*:* Ժամանակի թելադրանքով փոփոխություններ են կատարվում ֆիզիկական դաստիարակության համակարգում: Հարկավոր է գտնել այնպիսի կազմակերպչական ձևեր ու մեթոդներ, որոնք նպատակաուղղվեն պատանիների ռազմամարզական կրթությանը, զարգացնեն ուժ, դիմացկունություն և այլ կամային հատկություններ:

***3.5*** **-** Աշխատանքային դաստիարակություն*:* Աշխատանքը մարդկանց նյութական և հոգևոր հարստության հիմքն է , ուստի սովորողների մեջ պետք է դաստիարակել և ձևավորել աշխատանքի նկատմամբ պահանջմունք: Հանրօգուտ աշխատանքի , մասնագիտական կողմնորոշման, մասնագիտության ընտրության հարցերում լինել նեցուկ և հենարան:

***3.6* -** Բնապահպանական դաստիարակությունը կրթական տարբեր մակարդակներում իրականացվող գործողությունների ամբողջություն է , որը սովորողների գիտելիքները և պատասխանատվությունը բարձրացնելու միջոցով ստեղծում է էկոլոգիապես անվտանգ և առողջ շրջակա միջավայր, ուստի հարկավոր է ստեղծել նախադրյալներ էկոլոգիական մտածելակերպի կայացման և էկոլոգիական որակի բարձրացման համար:

***3.7* -** Դպրոց-ընտանիք կապը: Դարեր շարունակ երեխայի դաստիարակությունն իրականացվել է ընտանիքում և ուսումնական հաստատություններում: Ընտանիքի ազդեցությունը երեխաների զարգացման և ձևավորման վրա ունի անփոխարինելի ուժ, որովհետև յուրաքանչյուր խելամիտ ծնող լավ է ճանաչում իր երեխային: Դպրոցը պետք է հաշվի առնի սովորողի ընտանիքի կառուցվածքի առանձնահատկությունները

# *ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ*

| *Անցկացման օ/ա/տ* | *Միջոցառման բովանդակությունը* |
|---|---|
| | Դասարանի ակտիվի ընտրություն: |
| | Բարությունը կփրկի աշխարհը |
| | Անկախության տոնը: |
| | Հարգենք հայ զինվորի հիշատակը: |
| | Մենք սիրում ենք Վանաձորը: |
| | Հանճարն անգամ ուսուցիչ է ունեցել: |
| | Կազմակերպչական  հարցեր: |
| | Վնասակար սովորություններ: |
| | Առողջ ապրելակերպ: |
| | Ազնիվ և անկեղծ հարաբերություններ դասարանում: |
| | Ինչպես խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից: |
| | Ընկերասիրություն: |
| | Ինչպես պաշտպանվել բնական աղետներից: |
| | Դեկտեմբերի 7-ը երկրաշարժի զոհերի հիշատակի օր: |
| | Ինչպես են տոնում Ամանորը աշխարհում: |
| | 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում: |
| | |
| | Եկեղեցական տոներ: |
| | Համագործակցող դասարան: |
| | Հայկական բանակ: |
| | Ինտերնետը  իմ  կյանքում: |
| | Միջազգային կազմակերպությունները  և Հայաստանը: |
| | Գիրք նվիրելու տոնի խորհուրդը: |
| | Հայդուկային շարժում:Անդրանիկ Օզանյան: |
| | Ինչ մասնագիտություն եմ ընտրելու: |
| | Կանանց  միջազգային տոնը: |
| | Ազգային ավանդույթներ,տոներ,սովորույթներ: |
| | Երկամսյակի առաջադիմության ամփոփում: |
| | Մարդը և շրջակա միջավայրի պաշտպանությունը: |
| | Հիշում ենք և պահանջում: |
| | Եղեռնը և հայ ժողովուրդը: |
| | Արտագաղթը չարիք է: |
| | Մայիսը հաղթանակների ամիս: |
| | 1-ին Հանրապետության ծնունդը: |
| | ՀՀ պատմամշակութային  հուշարձանները: |
| | 2-րդ կիսամյակի  և  տարեկան առաջադիմության քննարկում: |

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուս/շ | Ուս. աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարող |
|---|---|---|---|
| I | Անցկացնել դասարանական ընդհանուր ժողով.<br>1.Բաժանել դասագրքերը,որոշել զեղչերի տրամադրման կարգը,աշխատանքային տետրեր<br>2.Պլանավորել առաջին կիսամյակում անելիքները<br>3.Ձևավորել դասարանական խորհուրդ, ընտրել դասարանական խորհրդի նախագահ: | 1-15/09 | Դասղեկ |
| II | Դասղեկական ժամերի գրաֆիկի կազմում,թեմաների ընտրություն: | 15-27/09 | Դասղեկ |
| III | Ռազմահայրենասիրական դաստիարակություն նպատակով՝ կազմակերպել զրույց.<<Անկախ Հայաստանը 32 տարեկան է>> թեմայով : | 23.09 | Դասղեկ |
| IV | Մենք սիրում ենք մեր Վանաձորը:Ներկայացնել քաղաքի պատմությունը: | 30.09 | Դասղեկ |
| V | Կազմակերպել միջոցառում նվիրված ուսուցչի օրվան : | 5-10/09 | Դասղեկ |
| VI | Արցախյան պատերազմի մերօրյա հերոսները:Դասղեկի ժամ: | նոյեմբեր | Դասղեկ |
| VII | Հարգանքի տուրք անմեղ զոհերի հիշատակին:Այցելություն եկեղեցի: | նոյեմբեր | Դասղեկ |
| VIII | Ինչպես պաշտպանվել բնական աղետներից,երկրաշարժ:յ | 2.12 | Դասղեկ |
| IX | Ներկայացնել և քննարկել Երեխաների իրավունքների | Դեկտեմբեր | Դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| | պաշտպանության կոնվենցիան: | | |
| X | Մեր ազգային – պետական տոներին անդրադառնալու նպատակով՝ կազմակերպել զրույց.<<Ամանոր>>թեմայով : | 16/12 | Դասղեկ |
| XI | Հոգևոր դաստիարակության նպատակով՝ կազմակերպել զրույց. <<Աղանդներ և ենթամշակույթներ>> թեմայով : | հունվար | Դասղեկ |
| XII | Հայոց բանակին նվիրված միջոցառման կազմակերպում: | հունվար | Դասղեկ |
| XIII | Ապահովել դասարանի մասնակցությունը առարկայական տասնօրյակներին: | Ուս տարվա ընթացքում | Դասղեկ |
| XIV | Հաճախակի կազմակերպել դասղեկի դասալսումներ տարբեր առարկաներից: | Ուս տարվա ընթացքում | Դասղեկ |
| XV | Իրավահավասարության նպատակով սովորողներին ծանոթացնել ներառական կրթությանը, հասկանալ նրանց վերաբերմունքը հատուկ կարիք ունեցող սովորողների նկատմամբ : | Հունվար | Դասղեկ |
| XVI | Գիրք նվիրելու տոնի խորհուրդը: | Փետրվար | Դասղեկ |
| XVII | Հայդուկային շարժում:Անդրանիկ Օզանյան: | Փետրվարի 24 | Դասղեկ |
| XVIII | Կանանց միամսյակ:Միջոցառում նվիրված ծնողներին և ուսուցիչներին: | Մարտ 8-ապրիլի 7 | Դասղեկ |
| XIX | Տարվա եղանակներ:Ինչու եմ սիրում գարունը: | Մարտ | Դասղեկ |
| XX | Խտրականություն: Դասղեկի ժամ: | Մարտ | Դասղեկ |
| XXI | Վնասակար սովորություններ: | Մարտ | Դասղեկ |
| XXII | Առաջադիմության հետ կապված հարցերի քննարկում: | Մարտ | Դասղեկ |
| XXIII | Արտագաղթը չարիք է: | Ապրիլ | Դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| XXIV | Հայոց մեծ եղեռնի հետևանքները: | Ապրիլ | Դասղեկ |
| XXV | Մասնակցություն եղեռնին վերաբերող դպրոցական միջոցառումներին: | Ապրիլ | Դասղեկ |
| XXVI | Աշխատանքային դաստիարակության նպատակով՝ կազմակերպել հանրօգուտ աշխատանքներ, սովորողներին մասնակից դարձնել դպրոցամերձ հողամասի աշխատանքներին: | Ապրիլ, մայիս | Դասղեկ |
| XXVII | Պարբերաբար անցկացնել ծնողական ժողովներ:Քննարկել կարգապահության և առաջադիմության հետ կապված խնդիրները: | Ուս տարվա ընթացքում | Դասղեկ |
| XXVIII | Այցելություն թանգարաններ,մշակութային այլ օջախներ: | Ուս տարվա ընթացքում | Դասղեկ |
| XXIX | Կազմակերպել զրույց.<<Իմ երազանքները>>թեմայով : | Մայիս | Դասղեկ |
| XXX | Աշխատանքային դաստիարակության նպատակով կազմակերպել զրույց. <<Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն>>թեմայով : | Մայիս | Դասղեկ |
| XXXI | Ռազմահայրենասիրական ոգին ամուր պահելու նպատակով կազմակերպել զրույց.<<Մայիսը հաղթանակների ամիս է>>թեմայով: | Մայիս | Դասղեկ |
| XXXII | Կազմակերպել զրույց.<<Հայաստանի առաջին հանրապետություն>>թեմայով : | Մայիս | Դասղեկ |
| XXXIII | Երկրորդ կիսամյակի, տարեկան | 2րդ | Դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| | առաջադիմության քննարկում և ամփոփում: | կիսամյակի վերջ | |
| XXXIV | Էքսկուրսիա դեպի ՀՀ պատմաճարտարապետական հուշարձաններ : | Ուս. տարվա ավարտին | Դասղեկ |